

ԼՈՒՐԵՐ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

1990 թվականի մարտի 26-ին, երկուշաբթի օրը, սրտի կաթվածից վախճանվեց Կանադայի հայոց թեմի անդրանիկ առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն արքեպիսկոպոս Քեշիշյանը: Իսկ նույն թվականի ապրիլի 3-ին տեղի ունեցավ թեմական խորհրդի բացառիկ նիստը, որի ընթացքում Կանադայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ ընտրվեց Մայր Աթոռի երիտասարդ միաբան հոգեշնորհ Տ. Հովնան ծ. վարդապետ Տերտերյանը: Հոգեշնորհ հայր սուրբը այնուհետև, մայիսի 26-ին, շաբաթ օրը, թեմական պատգամավորական 7-րդ ժողովում, փակ քվեարկությամբ, ընտրվեց Կանադայի հայոց թեմի առաջնորդ:

Ընտրության ավարտին իր անդրանիկ պատգամում նորընտիր առաջնորդ հայր սուրբը վերանորոգեց իր ուխտը և ասաց. «Ծառայությունը՝ կեանքը գործնականօրէն հարստացնող լաւագոյն մեթոտն է... ինձ համար, ծառայությունը, որպէս Ս. Էջմիածնի միաբան իմաստ կ'ունենայ, երբ այդ շաղախուած է Սուրբ Էջմիածնի հանդէպ հաւատարմութեամբ, հայրենիքի գերագոյն շահերու գիտակից գաղափարականով եւ իմ ժողովուրդի նկատմամբ ամբողջական ու անսակարկ նուիրումով»: Անդրանիկ իր պատգամում նորընտիր առաջնորդ հայր սուրբը իր երախտագիտությունը հայտնեց թեմական պատգամավորական ժողովին և համառոտակի ներկայացրեց ծրագրված իր աշխատանքային պատկերը:

Նույն թվականի հոկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ձեռամբ Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Տ. Հովնան ծ. վարդապետը ձեռնադրվեց եպիսկոպոս:

Այնուհետև երիտասարդ թեմական առաջնորդը մեծ ոգևորությամբ և նվիրումով լծվեց եկեղեցական ու հայրենական ծառայությանը: Նորընտիր առաջնորդ սրբազան հոր առաջին գործը եղավ հայերեն և անգլերեն լեզուներով հաղորդագրությունների հրապարակումը, որտեղ ամփոփ կերպով ներկայացվում են թեմում կատարված բոլոր ձեռնարկումները՝ լինեն դրանք ազգային-եկեղեցական, մշակութային, կրթական թե այլ բնույթի:

Տ. Հովնան եպիսկոպոսը հաճախ է այցելում թեմի ծուխեր, ս. պատարագ մատուցում, քարոզներ խոսում: Շուրջ մեկ տարվա առաջնորդական ծառայության ընթացքում սրբազան հայրը կատարել է մի շարք ձեռնադրություններ (դպիր, կիսասարկավագ, սարկավագ):

Կազմակերպված են ընթանում Տիկնանց և Երիտասարդաց Կենտրոնական Մարմինների աշխատանքները, ինչպես նաև շաբաթօրյա և կիրակնօրյա վարժարանների գործունեությունը:

Կանադայի հայոց թեմից ներս իրենց բեղմնավոր գործունեությունն են ծավալել մի խումբ կուսակրոն և ամուսնացյալ քահանա հայրեր, ինչպես նաև սարկավագաց և դպրաց դասերը՝ անձնդիր նվիրումով ծառայելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և մեր ժողովրդին: Պարբերաբար գումարվում են հոգևորականաց հավաքներ, որոնց ընթացքում քննարկվում են թեմի ներքին կյանքին (և ոչ միայն ներքին) առնչվող հրատապ հարցեր:

Կանադայի հայոց թեմը, իր անսպառ եռանդով լի թեմական առաջնորդով, լծված է նաև մի սրբազան առաքելության՝ որքան հնարավոր է սատար կանգնել հայ ժողովրդին հայրենիքում՝ Մայր Հայաստանում, օգնել նրան ոտքի կանգնելու և թոթափելու ներկայիս ծանր կացությունը: Աղետի գոտուն և հատկապես Հայաստանի մատաղ սերնդին նյութական օգնություն հասցնելու գաղափարը մեծ ոգևորություն առաջացրեց և ընդունելություն գտավ Կանադայի հայության շրջանում: Նրանք իրենց գործնական օժանդակությունն են բերում այս գործում: Այս առթիվ Կանադայից արդեն բարերարների և մասնագետների մի շարք խմբեր այցելել են Մայր Հայաստան, հատկապես աղետի գոտի, և իրենց գործնական աջակցությունը բերել աղետի գոտու կարիքներին: Աղետի գոտու որբ և ծնողազուրկ երեխաների համար հաստատված է կայուն դրամական օժանդակություն: Մասնագետներ են հրավիրվել Կանադա՝ համապատասխան վերապատրաստում անցնելու համար: Կանադայի հայոց բարերարների միջոցներով աղետի գոտում կառուցվում են բուժարաններ:

Կարևոր և գնահատելի աշխատանք է նաև Կանադայի հայոց թեմի կատարած հրատարակչական աշխատանքները՝ հրատարակվում են բազմաթիվ կրոնական-եկեղեցական գրքեր, մեծաքանակ գունավոր սրբանկարներ, որոնց մեծ մասը առաքվում է Մայր Հայաստան՝ բավարարելու համար հայրենի ժողովրդի հոգևոր կարիքները:

Կանադայի հայոց թեմը ապրում է իր բուռն վերելքը:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ